կաթողիկոսներուն միչտ Հայկական անկախ իշխանութիւն մը ստեղծելու համար։

1691ին Պարսկաստան կը փութացնէ հայ Սիմէոն երէց Փեթրովիչը՝ անոր տալով թերանացի և գրաւոր հրահանգներ։

Թան Սոպիեցքի հոն երեւան կու գայ իր իսկական կաթոլիկ, վանդի սեղանի վրայ կը դնէ հայ և կաթոլիկ եկեղեցիներու միութիւնը և ուրիշ պայմաններ (Ւևրեւ, 26 Հոկտ. 1944)։

Ւնհաւանական չէ, որ Յովհաննէս Թիւթիւնճի խառնուած ըլլայ այս բանակցութիւններուն և մասնակցած լեհ թագաւորին կողմէ եղած ձեռնարկներուն։

Նոյն իսկ կրնայ ըլլալ, որ այս առթիւ Հապէշիստան ղրկուած ըլլայ 1678ին, ճիշդ այն թուականին որ լեհ թագաւորը Պոլիս՝ Հայոց կաթողիկոսին կը ղրկէր պատուիրակութիւն մը, հայկական թագաւորութիւն մը կազմելու և թուրքերը կռնակէն զարնելու համար։ Թիւթիւնճի հաւանօրէն կ'երթար Հապէշ թագաւորին մօտ, որպէսզի համոզէր զայն Ափրիկէի մէջ հարուածելու թուրքերը և այսպէս չորս կողմէն յարձակումի ենթարկելու Օսմ. կայսրութիւնը։

Յովհաննէս Թիւթիւնճիի 1670—1678 և 1680—1683 և 1683—1698 չրջաններու գործունէութիւնը քանի որ անյայտ կը մնայ մեզի և միայն անցողակի կերպով գիտենք, թէ լեհաստան և Եւրոպա չրջած է, կրնանք ենթադրել թէ դեր մը ունեցած է հայ կաթողիկոսներու հետ կատարուած բանակցութիւններուն մէջ, մանաւանդ 1683էն յետոյ, երբ Օսմ. կայսրութեան առաջխաղացումը կը կասէր Վիէննայի չախչախիչ պարտութեամբ, որուն մէջ Հայերն ալ բա-